

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Շահող կտրոն» վիճակահանության արդյունքների մասին

ՀԴՄ կտրոնների շահման համար նախատեսված հատուկ համարների 2009 թվականի դեկտեմբերի 11-ին կայացած վիճակահանության արդյունքում հայտնի դարձած շահող թվերն են (առաջին նիշից սկսած հաջորդական հերթականությամբ)՝

3	4	5	3	3	4	4	3
----------	----------	----------	----------	----------	----------	----------	----------

2009 թվականի դեկտեմբերի 11-ին կայացած վիճակահանությանը մասնակցել են միայն 2009 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 30-ը ներառյալ քաղաքացիների կողմից ստացած ՀԴՄ կտրոնների շահման համար նախատեսված հատուկ համարները:

Շահող կտրոններ են համարվում այն կտրոնները, որոնց առաջին 4, առաջին 5, առաջին 6, առաջին 7 կամ առաջին 8 թվերը համընկնում են վիճակահանության արդյունքում հայտնի դարձած թվերին՝ ըստ հաջորդական հերթականության:

Քաղաքացիները շահումները կարող են ստանալ 2009 թվականի դեկտեմբերի 14-ից մինչև 30-ը ներառյալ բանկերի բաժանմունքներում՝ անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա, ներկայացնելով նաև անձնագրի կամ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և կտրոնի բնօրինակը:

Շահում եք Դուք, շահում է պետությունը